



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրներն, միացե՛ք

ՃԱՆԱԶԻՐ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԲԻԴ ՌԱՅՈՆԸ

355.23

D-23

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԿԲ ԲԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ

1932—ՍԵՊՏԵՄԲԵՐ

Տակտիկական ուսուցումը, վոր յեզ-
րափակում է բանակի մասերի տարեկան
ուսմունքը, այս տարի անց է կացվելու
Հայաստանի յեղբայրական հանրապե-
տության տերրիտորիայում: Յուրա-
քանչյուր ուղմիկ պետք է իմանա վոչ
միայն ուսուցման անմիջական ռաջոնը,
այլ և ամբողջ յերկրի պատմությունը,
ցարական զաղութից նրան սոցիալիստա-
կան յերկրի վոխակերպելու պատմու-
թյունը:

Հայաստանի անցյալը՝ Կանդաղար
չարիքների, զաղութային ճնշման և աշ-
խատալոր մասսաների արյունահեղ վո-
չնչացման ուղի յե յեղևը՝ ազգային թշնա-
մության հողի վրա:

Հայաստանի աշխատալորները յեր-
րեք չեն մոռանա անցյալ դարի արյունա-
հեղ կոտորածը, վորը թանգ նստեց նը-
րանց—50 հազար սպանւած, 100 հազար
հաշմացած և 300 հազար սոանց տթևա-
նի մնացած:

23 MAY 2013

41.283

Յերկրորդ արյունահեղ կոտորածն իմպերիալիստական պատերազմի ժամանակ Հայաստանին նստեց 600 հազար մարդ, այդքան եւ աքսորվեցին ուրիշ ոստաններ:

Ռուսական ցարիզմը, մտաւիկ եւ դաւաճանակի իր քաղաքականությամբ, ազդամիջյան ատելություն եր բորբոքում Հայաստանում բնակվող հայերի եւ թուրքերի միջև, վերը քանիցս վերջացել ե աշխատանահեղ կոտորածով:

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Հայաստանում իշխանությունը հանդտակում ե հայ բուրժուազիայի Դաշնակցություն կուսակցությունը: Դաշնակները ազգային քաղաքականությունը համգում եր նրան, վորպեզդի Անտանտայի, գլխավորապես Անգլիայի ոգնությամբ ստեղծեն «Մեծ Հայաստան» նախկին սահմաններով: Այդ «ոգնության» համար դաշնակները պարտավորվել եյին պայքար մղել խորհրդային Ռուսաստանի դեմ, աջակցել սպիտակ-զբվարդիականներին ե արյունահեղ պայքար տանել բոլշևիզմի դեմ Հայաստանի

նեքսում: Դաշնակները չովինիզմը առաջ բերեց յետամյա քինված պայքար հարևան հանրապետությունները—Վրաստանի ե Ադրբեջանի հետ—«վիճելի» հողամասերի համար:

Իհարկե, այդ ժամանակ տնտեսական-կուլտուրական վոչ մի շինարարության մասին խոսք լինել չէր կարող: Հայ բուրժուազիայի ե նրա կուսակցության իշխանությունը վոչ միայն չբարեւալեց Հայաստանի աշխատավորները դրությունը, այլ ե ե'լ ավելի վատթարացրեց: Դաշնակները վոչինչ չթողեցին մեզ, բացի քայքայված յերկրից, այդ բառի սեղանիկ իմաստով, բացի ավերակներից, վոչինչ չձեռնարկեցին, բացի առաջները գոյություն ունեցածի ավերումներից:

1920 թ. Բազմում խորհրդային իշխանություն հաստատելը կենդանի արձագանք գտավ ե Հայաստանում: Լենինականում (նախկին Արեքսանդրոպոլ) լսեղի ունեցում հեղափոխական ազատամբություն կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Դրան վորպես պատասխան, դաշնակներն ե'լ ավելի կրճատցրին իրենց զայլի առամները, սարքեցին մահմեդա-



56558.66

կանններն արյունահեղ կոտորած, իսկ հետո պատերազմ սկսեցին տաճիկները դեմ, մտադրվելով դրանով թուլացնել պրոլետարիատը և աշխատավոր մասսաները հեղափոխական շարժումը: Այդ պատերազմն ավարտվեց հայկական զորքերի լիակատար ջախջախումով և տեղի տրեալի գլխով մասին կորուստով:

Աշխատավորները համբերված յո՞ւր հատել եր: Դաշնակները անվերջ չարիքներ իրց, կոտորածներ ից և ավանդուբանդներ ից տանջված Հայաստանի աշխատավորները պայքարի դրոշ բարձրացրին հանուն խորհրդային իշխանության և 1920 թվի նոյեմբերի 29-ին Կարմիր Բանակի աջակցութեամբ լիակատար հաղթանակ տարան:

Սկսվեց Հայաստանի նոր պատմութեանը:

Հայաստանի ներկայնդա լինելույն կուսակցութեան ղեկավարութեամբ աշխատավոր մասսաների հեղափոխական պայքարի ուղին և հանուն սոցիալիստական յերկրի:

Անդրֆեդերացիայի յեղբայրական հանրապետութեանների հետ մեկտեղ Հայաստանն

տանն ապրում և սոցիալիստական շինարարութեան իսկական վերելք:

Յեթե 1923—24 թվին հանրապետութեան ժողովրդական տնտեսութեան վերականգնման համար ներդրվել և միայն մոտ յերեք միլիոն ուրբի, ապա այս տարի ներդրվել և արդեն 144 միլ. ուրբի, իսկ ընդամենը 9 տարվա ընթացքում՝ 382 միլ. ուրբի:

Դաշնակները տիրապետութեան ժամանակ յերկրի ամբողջ արտադրանքը հավասար եր յերկու միլ. ուրբու, իսկ խորհրդային Հայաստանը միայն այս տարի արդյունաբերական արտադրանք և տալիս 144 միլիոն ուրբու:

Այդ թվերը խոսում են այն մասին, թե ինչպիսի արադուլթեամբ յերկրը վերականգնվում և սոցիալիստական ձևով, թե ինչպես յերկրի բանվոր դասակարգի, կոլտոշնիկների և ջրավոր-միջակ մասսաների համար ստեղծվում են կյանքի ու աշխատանքի ալելի և ալելի բարեալ ող պայմաններ:

Տարեց-տարի աճում և ամրապնդվում և յերկրի ինդուստրիալ վոլնաչարք:

Ձեր ինստիտուտն անվան ՅԵՐԵՎԱՆԻ ՄԵ-

ԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆ ՊԵՆԻ ամենա-
կատարելագործված սարքավորում և հան-
դիսանում է մեքենաշինարարության ամե-
նախոշոր ինդուստրիալ ձևոնարկություն-
ներէից մեկը: Արդեն այժմ գործարանը
պատրաստում է բարդ սարքավորում պա-
հածոյի արդյունաբերության համար:

Լենինականում կառուցված և սարքա-
վորված է տեխնիկայի վերջին խոսքով
ուժեղ ՏԵԲԱՍԻԼ ԿՈՄԲԻՆԱՏԸ: Արդեն այս
տարի նա 45 հազար իլիկից հասցվելու յե-
մինչև 100 հազար իլիկի:

Խորհրդային իշխանությունը կյանքի
յե կոչել ԱՐԹԻԿ-ՏՈՒՖԻՆ: Առաջին հնգա-
մյակի յերեք տարվա ընթացքում նա յերկ-
րին կտա 300 հազար խորանարդ մետր շե-
նարարական քար—տուֆ: Տուֆի արտա-
դրությունը և մշակումը մեքենայացվում
է:

ԱԼԼԱՀՎԵՐԳՈՒ ՊՂՆՁԻ ԿՈՄԲԻՆԱՏԸ
հարստանում է ուժեղ պղնձածուլական
գործարանով: Ալլահվերդու և Ղաթիանի
հանքերն այս տարի կտան հինգ հազար
տոնն պղինձ, վոլրն մեր յերկրն ուժեղ
կարիք և դրամ:

Շուտով աշխատել կսկսի նոր ինդուս-

տրիալ գեղանալ—ԲԻՄԻԿԱՆՆ ԽՈՍԲԻՆԱ-
ՏԻ ԿԱՐԲԻՏԻ ՅԵԽԸ:

Հայաստանի գանադան մասերում աշ-
խատում են—պեմզայի հանքերը, ուժեղ
պահածոյի և կարբիդի գործարաններ, փայ-
տամշակման և բամբակագործի Փաբրիկա-
ներ, ցեմենտի գործարաններ, մարմարի
քարահանքեր և այլն:

Յերկրի արդյունաբերությանը և գյու-
ղական տնտեսությանն են երդետիկական
բազա յե տրվում: Յեթե ցարական Հա-
յաստանում յեղել է ընդամենը՝ մեկ ելեկ-
տրոկայան 2000 ձիու ուժի, ապա Խորհ-
Հայաստանում կան մի քանի ելեկտրոկա-
յաններ 100 հազար ձիու ուժի: Այս տարի
աշխատել կսկսի ՋՈՐԱԳԵՍԻ ուժեղ կայա-
նը, վոլրն են երգիա կտա Ալլահվերդու պը-
ղնձի կոմբինատին, Ղարաքիլիսայի քիմ-
կոմբինատին, Փամբակի գեանիտի մշա-
կումներին, Տանձուտի ծծմբա—հրաքարի
հանքերին, ծծմբա—թթվուտային և պղնձի
արջասպի գործարաններին և ելեկտրիֆի-
կացիայի կենթարկի Ստեփանավանի, Ղա-
րաքիլիսայի ու Ալլահվերդու ռայոնների
կոլտոգներն ու քովտոգները: Յերեանից
յոթ վերստի վրա Չանդու գետի վրա կա-

ռուցվում և ՔԱՆԱՔԵՌԻԳԵՍ ուժեղ կայանը:

Միաժամանակ սոցիալիստական ին-
դուստրիայի զարգացման հետ Վլենրակա-
ռուցվում և և դյուդական տնտեսությունը
սոցիալիստական ձևով: Գյուղացիական
մանր, ցաք ու ցրիվ տնտեսությունները 35
տոկոսն արդեն կորեկալիացված և:

Մեքենայացվում են և դյուդատնտե-
սական աշխատանքի ձևերը: Պրիմիտիվ
դյուդատնտեսական զործիքներն իրենց
տեղը զիջում են արակտորներին և դյու-
դատնտեսական բարդ մեքենաներին:

Սարգարաբադի տախտատանը մինչև
հեղափոխությունը արակտոր չի տեսել,
իսկ այժմ այնտեղ աշխատում և ՄՏ կա-
յան 94 տրակտորով: Նա վերափոխում և
անդրադետ հայ դյուդացիներին կոլխոզ-
նիկ-դյուդացիներին նոր տիպի, վորոնք
տիրապետում են բարձր տեխնիկային:
Միայն վերջին տարվա ընթացքում ՄՏ
կայանը պատրաստել և 50 շրջիկ մեխանիկ-
ներ, 200 տրակտորային բրեգադերներ,
400 ղեկ վարողներ, 155 ջրողներ, 50 զաչ-
տավարներ, 233 կոլխոզային բրեգադերներ
և 410 ցանողներ: ՄՏ կայանին կից կառու-
կերպված դատնթացներում սովորել են

Հայաստանի ԵԼԹ Հաղար Կոլխոզներին
Չքաղորդողներին ՍԱՇԱ ԲԱՍԻԼՅԱՆՆ
անցյալ տարի կայանից հեռացել և վորպես
ղեկ վարող, իսկ այժմ նա ղեկավարում և
Ախտայի նոր կառմակերպված ՄՏ կայանը:
Յեվ աղաղիսի Բասիլյանները, վորոնք
տիրապետել են տեխնիկային, գրավել ղե-
կավար պաշտոններ, հարյուրներ և հա-
զարներ են:

Յերկրի դյուդական տնտեսության
մեջ համառ կերպով մտցվում են տեխնի-
կական կուլտուրաներ: Դաչնակներին ժա-
մանակ բամբակի ցանքերի տարածությու-
նը հասնում էր 570 հեկտարի, իսկ այս
տարի՝ 30 հազար հեկտարի:

Հունիս ամսին Հայաստանի աշխատա-
վորները մի նոր հաղթանակ տարան դյու-
դական տնտեսության սոցիալիստական
վերակառուցման Փրոետում: Սևան-Չանգ-
վի ջրերը Ղոբրի նորակառույց ջրանցքով
խուժել են մինչև այդ համետ դատարկ ու-
յունը և վորողելու յեն 51 հազար հեկտար
տարածություն, վորից 45 հազար հեկտա-
րը Ղոբրից, իսկ վեց հազար հեկտարը հա-
րևան Նախիջևանի ավտոնոմ հանրապե-
տության հողերից: Ղոբրի ջրերն արդեն

այս տարի վստակել են կոլտնոգային դաշ-
տերի առաջին 3000 հեկտար բամբակը :
Ղուերի վոռոգվող հողերն ամբողջովին
տրվելու յեն կոլտնոգներին և սովետիզմ-
բին :

Յերկիրն անցած 11 տարվա ընթաց-
քում հսկայական նվաճումներ և ունեցել
և կուլտուրական հեղափոխության տեղա-
մասում : Յեթե ցարական կառավարության
ժամանակ՝ 1914-15 թվին՝ տարրական և
միջնակարգ դպրոցներում սովորում էր
34.44 մարդ, իսկ դաշնականի ժամանակ՝
45.694 մարդ, ապա 1930-31 թվին արդեն
սովորում էր 109 հազար մարդ : Հասակա-
վոր ազգաբնակչության միջև անդրադիտու-
թյունը վերացված է 51 խոկ. : Բացատրիկ
են ինքնակալին Հայաստանի նվաճումնե-
րը բարձրագույն կրթության ուղղու-
թյամբ : Յեթե ցարական կառավարության
ժամանակ՝ 1914-15 թվին՝ Հայաստանն
ունեւր ընդամենը 37 ուսանող, իսկ դաշ-
նականների որոք՝ 1919-20 թվին՝ 75 ուսա-
նող, ապա այժմ միայն Յերկանում հաշ-
վում են 16 հազար ուսանողներ հանրակե-
սության հայ, թուրք և մյուս ազգու-
թյունների աշխատավորներից : Յերկանում

ներկայումս ավարտվում է մի ամբողջ
բուհ-ական քաղաքի շինարարությունը,
վորտեղ կովիներու յե հոգր պրոկտորական
տեխնիկական ինտելիգենցիա :

Բուռն թափով աճում են նոր սոցիալիս-
տական քաղաքներ—Լենինական, Արթիկ-
տուֆ... Յերկանն այսօր համատարած շի-
նարարական քաղաք է : Կավածեւի տնակ-
ները տեղի յեն տալիս գիգանտների, վո-
րոնք կառուցվում են Արթիկի տուֆից :

Յարական ինքնակալության և դաշ-
նականների ժամանակվա աղբամիջյան խռո-
վություններից հետք անգամ չի մնացել :
Հայաստանը ներկայացնում է իրենից ա-
մուր միաձուլված ինտերնացիոնալ մի ըն-
տանիք :

Կոմունիստական կուսակցության ղե-
կավարությամբ Լենինյան աղգային քաղա-
քականությունն անցկացնող աշխատավոր
մաստանների հերոսական պայքարի 11 տա-
րիներն անճանաչելի կերպով փոխել են
ինքնակալին Հայաստանի տնտեսական
ղեմքը, դարձնելով նրան սոցիալիստա-
կան յերկիր : Յեւ յետամնաց զաղութային
ազրարային Հայաստանն այս տարի վեր և
ածվում ինդուստրիալ-ազրարային յերկ-

րի, նրա ժողովրդական տնտեսության
ընդհանուր արտադրանքի մեջ արդյունա-
բերության 52,7 տոկ տեսակարար կշռով:

Բուլեղիկյան յերկրորդ հնգամյակն ա-
վելի նշանակալից կերպով կլիտխի Հայաս-
տանի ԱՊԱԳԱՆ: Խորհրդային Հայաստանը
տնտեսական հասարակութուն կմտնի
տնտեսական անչափ աճած:

Հանրապետության սոցիալիստական
շինարարության մեջ յերկրորդ հնգամյա-
կում հսկայական դեր է հատկացվում Մեա-
նա լճին:

Այդ լիճը գտնվում է ծովի մակերևույ-
թից 2000 մետր բարձրության վրա և ունի
1.413 քառակուսի կիլոմետր ջրային մակե-
րևույթի հսկայական տարածություն:

Իջեցնելով Սևանի ջրերը, յենթադրվում
է կառուցել Սևան-Չանգլի երկրգետիկ և
երրիգացիոն սխտամ, — Դնեպրոնստրոյից
հետո յերկրորդն իր հզորությամբ, — բաղ-
կացած տասը կայանից, վորոնք իրար
հետ միացվելու յեն հաղորդման դժերով
և աշխատելու յեն ընդհանուր բեռնավոր-
ման համար:

Ահա թե ինչ է տալու այդ սխտամը
Խորհրդային Հայաստանին:

Սևանի իջեցված ջրերը կվտռեն 130
հազար հեկտար հողեր, բավականաչափ
կբարձրացնեն դրանց պտղավետութունը,
կնշանակի և կավելացնեն յերկրի գյուղա-
կան տնտեսության յեկամուտները:

Այդ սխտամի բաղայի վրա կկանգնեն
նոր ինդուստրիալ գեղանտներ: —

ԿԱՐԲԻԴԻ գործարանը — 50 հազար
տոննի:

ՄԵՏԱՂԱՅԻՆ ԱԼԵՈՒՄԻՆԻ գործարա-
նը — տասը հազար տոննի:

ԱՄԻԱԿԻ գործարանը — 50 հազար
տոնն կապակցված ազոտով:

ՔԱՅԱՆԱՅԻՆ ԹԹՎՈՒՏԻ գործարանը
վեց հազար տոննի:

Այդ բոլոր ձեռնարկությունները հա-
մախմբվելու յեն Յերևան-Չանգլի ուժեղ
կոմբինատի մեջ, վորը Ղարաբլիսայի
քիմկոմբինատի հետ մեկտեղ յերկրին կտա
հսկայական քանակությամբ պարարտա-
նյութեր, վորոնց մեծ կարիքն են զգում
հանրապետության կոլտոգային և սովխո-
ղային դաշտերը:

Կոմբինատի կառուցումը ցեմենտի մեծ
պահանջ կստաջացնի — մոտ հինգ միլիոն
տոննա. դրա համար էլ ԴԱՎԱՎԻ ՅԵՄՄԵՆ

ԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ արտադրողականությունը (գործարանը գտնվում է կոմբինատի ռայոնում) նախագծվում է հասցենեղ մինչև յերկու միլիոն տակառի:

Յենթադրվում է այդ ռայոնում լայն ծավալել թեթև և սննդի արդյունաբերությունը, ինչպես որինակ.—

ՏԵՔՍՏԻԼ Փարբիկա՝ 100 հազար էլիկով, 80 միլիոն մետր կոշտ գործվածքի արտադրությամբ:

ՄԱՀՈՒԴԻ Փարբիկա՝ 75 ստանդարտ, 1.100 հազար մետր գործվածքի արտադրությամբ:

ԿԱՇՎԻ գործարան՝ մեկ ու կես միլիոն հատ շելբրտի արտադրությամբ:

ՁԵԹ-ՈՃԱՌԻ կոմբինատ՝ 40 հազար տոնն յուղասերմի և ութ հազար տոնն, ո՛ճառի արտադրությամբ:

ՊԱՀԱԾՈՅԻ գործարան՝ 40 միլիոն տոնի սլահածոյի արտադրությամբ:

ՍԱՐԱՂԱՅ գործարաններ՝ որեկան 250 տոննի:

ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ՝ 15 հազար տոննի:

ՄԱԿԱՐՈՆԻ Փարբիկա՝ հինգ հազար տոննի:


ԿՈՄԲԻԿԵՐԻ գործարան՝ 100 տոնն կոմբինացիոն կերի արտադրությամբ:

ՓԱՅՏԱՄՇԱԿԱՄՆ Փարբիկաներ:

Յեկնովկայի ռայոնում (Սևանա լճի մոտ) կաճի ձկան արդյունաբերությունը, ռալա-պատտեղային և կաթնային արտադրությունը:

Յեկերորդ հնգամյակում աշխատել կսկսի ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՔԻՄԿՈՄԲԻՆԱՏԸ, նշանակալից չափով կաճի և արդեն դուրսբերում ունեցող ձկնարկությունները արտադրանքը: Որինակ՝ Արթիկ-տոնիբը յերկրորդ հնգամյակի վերջում յերկրին կտա վեց միլիոն խորանարդ-մետր շինարարական կալիստուֆ, առաջին հնգամյակի յերեք տարիներին 300 հազար խորանարդ-մետրի փոխարեն:

Ահա համառոտակի Խորհրդային Հայաստանի տնտեսական դեմքը յերկրորդ հնգամյակի վերջին, վերպես հետևանք հանրապետության աշխատավոր մասսաների հերոսական պայքարի հանուն լենինյան կոլեակցությունից դառնալու գծի: Խորհրդային Հայաստանի աշխատավորներն այդ նվաճումները ձեռք են բերել Հայաստանի Կոմկուսի կենտրոնի փորձված դե-



կամ արությամբ, դասակարգային թշնամի-
ները—կուլակները և դաշնակները, լենի-
նյան աղբյուրն քաղաքականությունից յե-
ղած բոլոր թեքումների դեմ մղված ան-
հաշտ պայքարի հիման վրա:

Անցնենք բանակային տակտիկական
ուսուցման անմիջական ուսյունին: Ուսու-
ցումն անց է կացվելու հանրապետության
յերկու ուսյունների տերրիտորիայում—Ղա-
րաքի լիսայնի և Ստեփանավանի:

ՂԱՐԱՔԻ ԼԻՍԱՅՆԻ ՈՒՅՈՒՆԸ հիմնակա-
նում գյուղատնտեսական ե—անասնաբու-
ծություն և հողագործություն, վերջի-
նում զերակչում են ցորենը, զարին և
կարմրացորեն:

Յերկրորդ հնադմյակը կվերսի ուսյունի
տնտեսական դեմքը և կլարձնի նրան հիմ-
նականում անասնաբուծական, խոշոր
կաթնային տնտեսություն զերակչումով:

Ուսյունը զարնան ցանքի պլանը կատա-
րել է համարյա թե լիովին: Բերքահավա-
քի կամպանիան յեռում է: Սակայն ուսյո-
նում յերաշտի պատճառով բերքահավաքի
պլանն ամբողջովին կատարել չի աջողվի:
Միջին հաշվով թերի բերքը կհասնի 30-35
տոկոսի, իսկ առանձին գյուղերում դա

մինչև անգամ 50 տոկոսից բարձր է: Հաս-
կապես չափազանց տուժել են յերաշտից
Համամու և Վորթնալ գյուղերը: Հասցա-
մթերումներից ուսյունն ազատված է լրիվ
կերպով, յետ կտա միայն սերմացվի նը-
պաստը:

Ուսյունն ունի 84,227 գլուխ անասուն,
վորից 5 տոկ, մանր անասուններ և 42
տոկոսը՝ խոշոր յեղջուրավոր անասուն-
ներ:

Ուսյունը բուռն կերպով կուլիվաց-
վում է: Յեթե մինչև անցյալ տարվա հուն-
վարի մեկը կուլիվացված է յեղել տըն-
տեսությունների չորս տոկոսը, ապա այս
տարվա հունվարի մեկին արդեն կուլիվաց-
վացված է յեղել բոլոր տնտեսություննե-
րի 39 տոկոսը:

Այսօր ուսյունն ունի 30 կոլխոզ, ընդ-
գրկելով 3·108 տնտեսություն և 21 անաս-
նաբուծական կոլխոզային ֆերմա:

Վարոչ կոլխոզներ վոչ թե խաքով,
այլ գործով կերտելով կուսակցության
վորոշումները և ընկ. Ստավինի վեց ցուց-
մունքները, կազմակերպական — տնտեսա-
կան և քաղաքական նշանակալից ամրա-

պնդման են հասել և դժուար անաջատար
դեր են խաղում :

Որինակ կարող ե ծառայել Համամիլի
դյուղի կոլխովը, վորն ընդգրկել և դյուղի
տնտեսություններն 76 տոկոսը : Իր բոլոր
դաշտերը կոլխովը բաժանել և առանձին
մասերի, դրանցից յուրաքանչյուրին կը-
ցել և բրդադը, վորը և դաշտը մշակում և
սկզբից մինչև վերջ : Աշխատանքի ճիշտ
լաշխման հետևանքով կոլխովը դարնան
ցանքի պլանը կատարել և 107 տոկոսով,
այս տարի հերկել ու ցանել և 1.484,4 հեկ-
տար՝ ամբողջ դյուղի մշակած 1.841,9
հեկտարից :

Կոլխովը հազեցված և տեխնիկայով,
Ունի հինգ տրակտոր, չորս խոտհար մեքե-
նա, մեկ կալիչ և չորս խուրձ կապող
մեքենաներ : Բոլոր մեքենաների վրա աշ-
խատում և սեփական ուժերով Արարատ-
ված կադրը : Յուրաքանչյուր մեքենա կըց-
ված և վորոշ կոլտիպիկի, վորը և պա-
տասխանատու յե նրա պատրաստվածու-
թյանն աշխատանքի համար :

Այդ կոլխովը ուսյունում ցուցական և
դառնում : Գարնան ցանքի ժամանակ նա
սոցիալիստական բուքսիլի յե վերցրել հա-

րևան թուրք դյուղերին : Քնանով ամրա-
պնդելով ինտերնացիոնալ միաձուլումը :

Քնած չե և դառակարգային թշնամին :
Ծախարուն սոցիալիստական շինարարու-
թյան դեմ մղվող պայքարում նա աշխա-
տում և ոգտագործել նացիոնալիզմի դեմ-
քը, վործում և ռայոնի բազմազգի սոցիա-
լիստական մեջ սոցիալին տակություն
վառել, վարկաբեկել կոլտակցության և
կառավարության միջոցառումները, վոր-
պեսդի կատեցնի դյուղական տնտեսության
սոցիալիստական վերափոխումը :

Վարթանուկ դյուղում, որինակ, դա-
ռակարգային թշնամուն աջողվել և ինտեր-
նացիոնալ կոլխովը բաժանել յերկու մա-
սի—թուրքականի և հայկականի :

Իր պայքարի մեջ դառակարգային
թշնամին տեղ-տեղ դործադրում և և տեր-
րոր : Յերկու դյուղում նա ալրել և կոլխո-
դային խոտի դեգերը :

Արդյունաբերությունը ուսյունում մի-
այն սկսում և ծախալվել և առաջմ ընդհա-
նուր արտադրանքի մեջ աննշան տեսակա-
րալը կշիռ տեղի—մոտ տաս խոլկոս :

Փամբակ կայարանի ԳՐԱՆԻՏԻ դոր-
ծարանն այս տարի կտա մեկ միլիոն հա-

խորանարդ քարերը: Այդ քարը ուղարկվում է Մոսկվայի, Թիֆլիսի և Յերևանի փողոցները սալահատակելու համար: Յերկրորդ հնդամյակի վերջին դործարանի արտադրանքը հասցնվելու յե մինչև 788 հազար ռուբլու:

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԿՂՄԻՆԴԻՐ-ԱՂՅՈՒՍԻ դործարանն այս տարի կտա մեկ միլիոն հատ կղմինդը և 400 հազար հատ աղյուս: Յեկող տարի դործարանի արտադրողականությունը հասցրվելու յե յերկու միլիոն հատ կղմինդրի և մեկ միլիոն հատ աղյուսի:

Քոլադերան կայարանի մոտ այս տարի ավարտելու և դործարկվելու յե ՋՈՐԱ-ԳԵՍ հիդրոկայանը 22 հազար կիրովատոմա կարողությամբ: Կայանն ենեղիա կտա Ղարաքիլիսայում կառուցվող քիմիկոմբինատին, Ալլահվերդու հանքերին, Ղարաքիլիսայի, Ստեփանավանի և Ալլահվերդու ռայոններին կոլխոզներին ու սովխոզներին:

Այս տարի ավարտվելու յե Ղարաքիլիսայի ուժեղ ՔԻՄԻԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏԸ, վոքն արտադրելու յե դաշտերի համար պարարտանյութեր: Յերկրորդ հնդամյա-

կի վերջին կոմբինատը տալու յե 35 հազար տոնն ցիանամիդ:

Պլանով նախատեսվում է 1936 թվին կառուցել ՅԻՆԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ 25 հազար տոնն արտադրանքով և ԱՐՃՃԻ ԳՈՐԾԱՐԱՆ՝ 7 հազար տոնն արտադրանքով: Վերջինն աշխատելու յե Ալլահվերդու և տեղական հանքանյութով:

Յեկող տարի նախադժված է վերջնականապես վերականգնել ԾԾՄԲԻ-ՀՐԱՔԱՐԻ ՀԱՆՔԵՐԸ, վոքոնք մինչև հեղափոխությունը կոնցեսիայով ելին տրված ֆերանախացի կապիտալիստներին: Յեկող տարի հանքերը պիտի տան 16 հազար տոնն հրաքար, իսկ յերկրորդ հնդամյակի վերջին՝ 100 հազար տոնն:

Տնայնագործական արդյունաբերության զարգացումը կղմինդրի, աղյուսի պատրաստում, տուֆի, քարի և գածի մշակում, գորգագործություն: Տնայնագործ-գորգագործներն աշխատում են արտահանման համար և այս տարի պիտի տան 3-700 մետր:

Արդյունաբերության և գյուղական տնտեսության կոլեկտիվացման աճումը փոխում է ռայոնի քաղաքական դեմքը:

Աղգարհակութեան հազմն այսոր հետեյալ սլատկերն ե տալիս:—Բաշկորներ՝ 13-14 տուկ., կոլխոզնիկներ՝ 33 տուկ., մենատնտես չքավորներ և միջակներ՝ 44 տուկ. և կուլակներ՝ յերկու տուկ.: Յերկրորդ հնդամյակը նշանակալից չափով կբարձրացնի բաշկորներն տեսակարար կշիռը: Աղգարհակութեան հիմնական զանգվածը հայեր են: Թուրքեր կան լատս տուկ., և ուսաներ՝ հինգ տուկ.:

Աճում ե ուսյոնի կուլտուրականութիւնը: Յեթե մինչև խորհրդային իշխանութիւն հաստատուելը ուսյոնում կար 9-10 դպրոց և աղգարհակութեան մեծամասնութիւնն անգրագետ եր, ապա այժմ ուսյոնն ունի 40 դպրոց 10·126 աշակերտով: Անցած տարւած ընթացքում լիկկայանները բաց են թողել 10·000 մարդ: Մտքոված ե յերեխաների պարտագիր կըրթութիւնը:

Այսոր ուսյոնն ունի վեց թատրոն և ակումբ, չորս կարմիր անկյուն, 12 խըրճիթ-ընթերցարան և մեկ գրադարան: Կոստիական օաղիտ-հաղորդիչ կայան՝ 310 կետերով:

Սոցիալիստական շինարարութեան դեմ մղած իր պայքարի մեջ դասակարգային թշնամին փորձում ե դրոհել և կուլտուրական Փրոքստում, ոգտագործելով ժողովրդական մասսաների գիտակցութիւնը մթադնելու հին գործիքը—կրօնը: Մարականները Վոսկրեսնովկա և Նիկիտովովկա գյուղերում դասակարգային թշնամին հակակոլխոզային աշխատանք ե տանում հետեյալ լողունգով — «կոլխոզները — դասոցիալիզմ ե, իսկ սոցիալիզմը կրօնի դեմ ե, կրօնը՝ սոցիալիզմի դեմ, և դրա համար ել հարկավոր չե կոլխոզ մտնել»:

Քահանաները և կրօնական պաշտամունքները դեկալարները փորձում են ոգտագործել չբերքը՝ իրենց կրօնական աղդեցութիւնը աղգարհակութեան յետամընաց խալիքի վրա ամրացնելու համար: Ռայոնի աշխատավորները հիմնական մասսան կուսակցութեան և կառավարութեան միջոցառումներին վերաբերւում ե դրականապես: Դրա մասին են խոսում կուսակցական և կոմյերիտական կազմակերպութիւնների աճման փաստերը, դարնան ցանքի և մասմթերումները սլանները կատարումը, հնդամյակի վճուական տար-

վա փոխառության կոնտրոլային թվերի կատարումը 119 տոկ.: Հնդաժյակի ալաբ-տական տարվա փոխառության կոնտրոլային թիվն առաջիմ կատարված է 73 տ.: Յետ և մնում մենատնտես գյուղացիների հասովածը, վորը կոնտրոլային թիվն առաջիմ կատարել է միայն ինչը տոկ.:

Շահալի, Ղամբիշկութ և խաչի գյուղերն ունեն հեղափոխական անցյալ, ալ-տիվ մասնակցություն ցույց տալով վրա-ցական մենշևիկների դեմ մղված պայքարին: Ռայոնում կան 96 կարմիր-պարտիզան: Հաջի-Ղարա գյուղում գոյություն է ունեցել ընդհատակյա կոմունիստական բջիջ:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՌԱՅՈՆԸ—հանրապետության ամենահարուստ անասնաբուծական ռայոնն է՝ ասլրանքային մեծ արտադրանքով:

Ռայոնն ունի 35.887 գլուխ խոշոր յեղջուրավոր անասուն, վորից 8972 համայնացրած է, և 29.909 գլուխ մանր անասուն, վորից 6.494 գլուխ համայնացված է:

Ռայոնում կան 37 կոլխոզային և 6 սովխոզային ֆերմաներ, վորոնցից 22-ը

ասլրանքա-կաթնային, 7 վաշխարաբուծական և 14 ֆերմա մատղալ անասունների: Սովխոզներն ունեն 3659 գլուխ խոշոր յեղջուրավոր անասուն: Աշխատում է մի մեծ պանրագործարան:

Բացի դրանից, ռայոնում կան—ծխաբուծական, ցեղային, դեղախոտերի և մեղվաբուծական սովխոզներ ու մեկ խառն սովխոզ:

Ռայոնի հողագործությունը յենթարկված է տնտեսության հիմնական ճյուղին—անասնաբուծությանը: Այս տարի մը չափված 13.179 հեկտար տարածությունից ցորենի ցանքերով բռնված է 3.319 հեկտար գարու — 2.300 հեկտար, վարսակի — 1.505 հեկտար և Վերի բույսերով — 2.260 հեկտար:

Այսոք ռայոնն ունի 31 կոլխոզ 2.921 տնտեսություններով, կամ ռայոնի բոլոր տնտեսությունների 33 խոկոսը: Կաղմակելիչորեն-տնտեսապես և քաղաքականապես դեռ վոչ բոլոր կոլխոզներն են ամբողջացված, իսկ դրա հետևանքով այս տարի մի քանի կոլխոզներից մաղվածքի դեպքեր են նկատվել:

Դաշնակյան ագենտներն աշխատավոր-

յեւրի մեջ լուրերը են տարածում, թե «խորհրդային իշխանութիւնը չի կարող զբաղուի հանել կոլտոյնների այդ մեծ թվից և դրա համար եւ շուտով դրանց կցըր»։ Տասակարգային թշնամին փորձում է կասեցնել արագային թշնամին փորձում է կասեցնել ռաշոնի կոլեկտիվացման առումը։

Ռաշոնը հազեցվում է տեխնիկայով։ ՄՏ կաշանն ունի 30 տրակտոր, իսկ սովխոզները՝ 11 տրակտոր։

Սովխոզները և ՄՏ կաշանը զգալիորեն նպաստում են անասնաբուծութեան բարելավմանը և կոլեկտիվացման զարգացմանը։

Սոտահավաքի կամպանիան աւարտվում է. նրա ընթացքից կարելի չէ յեզրաւորել, վրա պլանը լիովին կիրառւածի։ Յեռում է հացահատիկները բերքահավաքը։ Ռաշոնը, վորպես անասնաբուծական, հացամթերումներից ազատված է։

Անասնաբուծական սովխոզներում լայն կերպով կիրառւում է և մեծ հեղինակութիւն վայելում տնտեսաշարժակային բրդադէնների մեթոդը։ Հունիս և հուլիս ամիսներին տնտեսաշարժակային բրդադէները կաթնամթերէները արտադրում

թիւնն արտադրողական պլանները դերակատարել են։

Ռաշոնում խոշոր արդյունաբերական ձեռնարկութիւնների չկան։ Ն.Պակիրովի գյուղի ռաշոնում կատարւում է ծծմբի հրաքարի ու պղնձի հետախուզում և մասնակի մշակումն։ Մշակումների վրա ըզբաղված են ընդամենը սեղոնային տասնութները։

Տնայնագործական արդյունաբերութիւնից աչքի չեն ընկնում գորգագործութիւնը, վորն աշխատում է արտահանութեան համար, սակայն աննշան արտադրութիւն է տալիս։

Իր կազմով ռաշոնը բաղադրի յե. հայեր՝ 66 տոկ., ռուսներ՝ 23 տոկ., թուրքեր՝ 6 տոկ., իսկ մնացած 5 տոկոսը՝ բուրգեր և հույներ։ Ինտերնացիոնալ միաձուլութիւնը հիմնականում ամուր է, սակայն ազգային փոքրամասնութիւնների միջև պատրաստված կադրերի բացակայութիւնն ազդում է ինտերնացիոնալ դատարարութեան գործի վրա։

Կուլտուրական շինարարութեան տնտեսում ռաշոնը զգալի աջակցութիւններ և ձեռք բերել։ Յեթի խորհրդային իշխու-

նության հաստատութեաց առաջ ուսյոնն ունենը մի տասնյակից մի քիչ ավելի ղըպ-րոցներ, ապա այժմ արդեն կա 44 տարրա-կան և միջնակարգ դպրոց՝ 1-902 աշակեր-տով: Հասակավոր արդարեւսության մի-ջև անդրադերսության վերացումն աջող է ընթանում: Այսուր անդրադերսները թիվը հասնում է 5-6 տոկոսի: Ռայոնում կա 2 ակումբ, 20 խրճիթ-ընթերցարան, 21 գը-րադարան և ռադիո-հանգույց:

Աշխատավորները հիմնական մասսան կուսակցության և կառավարության մի-ջոցառումներին վերաբերվում է դրականա-պես: Դրա ոգտին են խոսում խոտահալա-քի պլանի համարյա լրիվ կատարման փաս-տերը, մասթթերումների պլանի լրիվ կա-տարումը և 75 տոկ. կաթի վերամշակման պլանը, բանվորները և ծառայողները կող-մից հնգամյակի ավարտական տարվա փո-խառության կոնսուլացիան թվերի գերա-կատարումը, կոլտոշները զգալի մասի յեւթը իրենց արտադրանքով Ստեփանա-վանի և Թիֆլիսի կոլտոշային բաղարները: Կոլտոշներին բնական փոխառության կոնսուլացիան թվերն առ այժմ կատարել են 51 տ.,

իսկ մենատնտես դոուլացիներն էլ ավելի պակաս:

Ռայոնը հեղափոխական անցյալ ու-նի: 1921 թվին ուսյոնի արդարեւսակությու-նըն ակտիվ մասնակցություն և ցույց տը-վել վրացական մենչեիկյան դորքերի դեմ մղված պայքարում, Վորոնցովկա, Հեբհեր և Պրիվոլնոյե գյուղերում զորամասերը գինաթափ անելու գործում: Ռայոնում կան մոտ 300 կարմիր-պարտիզաններ: Աչ-քի յե ընկնում Պրիվոլնոյե գյուղը, վոր-տեղ պարտիզանները թիվը հասնում է 100 մարդու:

Յերկու ուսյոնները աշխատավոր մաս-սաների վերաբերմունքը դեպի յերկրի ինքնապաշտպանության հարցերն ու կար-միր Բանակը՝ դրական է: Այդ մասին են վկայում 1910 թ. ծնված յերեսասարգների զինակոչի նախապատրաստմանը, հատկա-պես դասակարգային բնորությանը նրանց ակտիվ մասնակցության վառատերը: Զինա-կոչիկները մանրադնին մաղվում են բան-վորները և փոխտոշիկները ժողովներում: Սակայն յերկու ուսյոններում էլ ինքնա-պաշտպանողական, ինչպես և մյուս հա-

սարակական, կաղամկերգությունները աշխատանքը թույլ և անցկացվում:

Բոլոր հասարակական կաղամկերգությունների շարքում աչքի յե ընկնում Ստեփանավանի ռաջոնի Մոսկրի կաղամկերգությունը, վորը կարողացել է մոբիլիզացիայի յենթարկել իր անդամներին սոցիալիստական շինարարությանը մասնակցություն ցուցց տալու գործում: Կա Մոսկրի 11 հարվածային բրիգադ: Մոսկրի 400 անդամ սոցիալիստական բուքսերի կարգով աշխատել են կոլխոզներում: Կատարած աշխատանքի համար Մոսկրի կարմակերգությունը ստացել և փոխանցել զբոս:

ԿՈՒՍԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ և ԿՈՍՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ: Սոցիալիստական շինարարության ֆրոնտում աշխատավոր մասսաները հաղթանակ են ձեռք բերել կուսակցական կաղամկերգությունները կարող բուլլեիկյան ղեկավարությամբ:

Իդեոլոգիայի կայուն և միաձուլված, նրանք ամեն ոք պայքար են տանում հանուն կուսակցության գլխավոր գծի, սայոնների կուսակցական և աշխատավոր մասսաներին մոբիլիզացիայի յենթարկել:

ԼՈՎ սոցիալիստական շինարարության խնդիրները կատարման համար, կաղամկերգում են մասսաները՝ դասակարգայնորեն խորթ տարրերի փոխնդրություններին մեծակաչ հակահարված տալու համար:

Ղարաքիլիսայի կուսակաղամկերգություն ունի 845 անդամ և 435 թեկնածու: Կոմունիստները հիմնական զանգվածը՝ բանվորներ և կոլխոզիկներ են: Ստեփանավանի կուսակաղամկերգություն ունի 321 կուսանդամ և 198 թեկնածու: Կոմունիստների հիմնական զանգվածը կոլխոզիկներ են: Այս տարվա առաջին կիսամյակում Ղարաքիլիսայի կուսակաղամկերգությունն աճել է 143 մարդով, բացառապես բանվորներ և կոլխոզիկների հաշվին, իսկ Ստեփանավանի կուսակաղամկերգությունը՝ 68 մարդով, բացառապես կոլխոզիկները հաշվին:

Կոմյունիստությունը հանդիսանում է սայոնների կուսակաղամկերգությունների ալտիմ ողնակամը նրանց ամբողջ աշխատանքի մեջ: Ղարաքիլիսայի կոմսոմոլի կաղամկերգության մեջ կա 2075 կոմյունիստական, բացառապես բանվորներ և կոլխոզիկներ, Ստեփանավանի կաղամկեր-

պության մեջ՝ 1204 հոգի՝ հիմնական
զանգվածը կոլոխդնիկներ։ Առաջին կիսա-
մյակում կոմսոմոլի Ղարաքիլիսայի
կազմակերպութունն աճել է 157 հո-
գով։

Ստեփանավանի կոմյեքիտմիությո՛ւնը
խանդավառության խկական ոլինականեր և
ցույց տալիս սոցիալիստական շինարա-
րության տեղամասերում։ 80 կոմյեքիտա-
կաններ սոցիալիստական բուքսիբի կար-
գով աշխատել են Ալահալիբդու կոմբինա-
տում և գերեկցիայից ու կուսկազմակեր-
պությունից հրաչալի գնահատական ստա-
ցել։ 400 կոմյեքիտականներ բուքսիբի յեն
վերցրել տեղական անասնաբուժական
սովխոդի խոտահալաքը։ Սոտահալաքի
ժամանակ կոմյեքիտական բրիգադները
կոլխոզներում պլանը ժամկետին կատա-
րելու գործում ակտիվ հրահրողներն են
յեղել։ Ձեռքի հաըն անց են կացրել բացա-
ռապես կոմյեքիտականները, աշխատելով
անդամ գիշերները, իրենց յետևից գրամի-
լով անկուսակցական յեքիտասարգությա-
նը։ Կոմյեքիտականներն նախաձեռնու-
թյամբ մի քանի կոլխոզներ առաջինն են
դուրս յեկել կոլխոզային բազար, վորը ևս

սարքալոքիլ և կոմյեքիտմիության ակ-
տիվ մասնակցությամբ շարաթորյակի ժա-
մանակ։

Մարքսիստական-լենինյան պատրաս-
տության թուլության պատճառով առան-
ձին կուսակցականներ և կոմյեքիտակա-
ններ իդեոլոգիական անկայունություն են
դրսեորում, յեքրեմն հանդես գալով կու-
սակցության և կառավարության միջոցա-
ռումների դեմ դատակարգային թշնամու-
փողհարի դերում։

Միլիցիայի առանձին աշխատավորներ
կորցրել են դատակարգային զգաստությու-
նը, իմբիլել դատակարգային թշնամու-
հետ և դառել նրա բարձրախոսը հեղափո-
խական ոլինականության և կոլխոզային
շինարարության դեմ։ Կատարելով դատա-
կարգային թշնամու պատվերը, նրանք ծե-
ծել են կոլխոզնիկներին։

Կոլխոզնիկ Յեփրեմովին և Յակուչե-
վին, վորոնք կովերը ջրելու եյին բերել,
միլիցիոներները կասկածելով գինի ծախող
սպեկուլյանտից գինի գողանալու մեջ, ձեռ-
բակալել են և միլիցիատուն տանելու
ճամբին ծեծել։

Կոլխոզնիկուհի Պալյուպային ծեծել են

վոր մասսաների հետ, նրանց հետ միասին խոտագութն հակահարված տալ դասակարգային թշնամու թշնամական վտանձը գություններին:

— Պարզաբանելով աշխատավորներին կրոնի դասակարգային ելությունը, լուրջալուրջաբար վերարելովի աշխատավորների կենցաղին, հասկանալի ազդային փոքրամասնություններին, հիշելով, վոր կրոնական ֆանատիզմը (մուկոանդությունը) աշխատավոր մասսաների մեջ է մտնողովի հարյուրամյակներով, և դրա դեմ պայքարել վոչ թե ցատկոմներով, այլ ամենուրեք բացատրական աշխատանքով, ամբադնդված սոցիալիստական շինարարության կոնկրետ նվաճումները վաստելով և ցույց տալով կրոնի հակահեղափոխականությունը:

— Պարզաբանելով աշխատավոր մասսաներին դրամական միոցները ֆոբիլիզացիայի և հնդամյակի շորքորդ ավարտական տարվա փոխառության քաղաքական նշանակությունը սոցիալիստական շինարարության սլանի կատարման համար մորելիզացիայի յենթարկել մասսաներին, հասկանալի գլուղի անհատական սեկտոր

ընդ, արագությամբ կատարելու փոխառության և դրամական միջոցների մորելիզացիայի կոնսոլիդացիան թվերը:

— Մորելիզացիայի յենթարկել աշխատավոր մասսաներին հերթական զինակոչը ուրինակելի կերպով անցկացնելու համար հետևյալ լոգոնդով—«Տալ Կարմիր Բանակին դասակարգայնորեն մարտունակ, ֆիզիկական ամուր, գլխովին դրադետ և ոտավականորեն ինտապատրաստված լիբացում», ձգտելով, վորպեսզի յուրաքանչյուր զինակոչիկ ընդլած լինի բանվորների և կոլխոզնիկների ժողովներում, պաշտպանելով այդպիսով Կարմիր Բանակի մուտքը դասակարգայնորեն խորթ տարրերից:

Յուրյց տանք, վոր Կովկասյան Կարմիր ռադրոշ Բանակը հանդիսանում է Կարմիր Բանակի իսկական համալմբված ինտերնացիոնալ ջոկատը, յեղբայրորեն միաձուլված բազմազգի Անդրկովկասի աշխատավոր մասսաների հետ և միշտ պատրաստ հաղթանակող սոցիալիզմի յերկրի հաղթական պաշտպանության համար:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐԽՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ
ԲԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

41.283

1400

481

807 0

ՀՀ Ազգային գրադարան



NL0218668